ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե
abovyan.kotayq@mta.gov.am

06 սեպտեմբերի 2021թ.N Ե-2154

«ԿՈՏԱՅՔՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԳԵՎՈՐԳ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/20 ԾԱԾԿԱԳՐՈՎ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՊԱՆԹԵՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

Հարգելի պարոն Գևորգյան

Աբովյանի համայնքապետարանի և «ԿոտայքՇին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի մայիսի 31-ին կնքվել է «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/20» ծածկագրով պայմանագրը, որի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Աբովյան համայնքի կարիքների համար գերեզմանատան տարածքում արցախյան պատերազմի զոհերի հիշատակի պանթեոնի կառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»: Պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանվել է պայմանագրի հավելված 2-ով, որը երկարացվել է 2021 թվականի հուլիսի 27-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը կազմող Համաձայնագիր 1-ով, որում շինարարական աշխատանքների վերջնաժամկետը նշված է 2021 թվականի օգոստոսի 30-ը:

Հայտնում ենք, որ պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է, սակայն «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքները չեն ավարտվել, ինչպես նաև կատարման շրջանակներում տեխնիկական հսկողություն իրականացնող «ԼԵՌՄԱՆ» ՍՊԸ-ն 2021 թվականի հուլիսի 21-ի գրությունով տեղեկացրել է «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից թույլ տված կոպիտ խախտումների և թերությունների մասին: Համայնքապետարանը հուլիսի 27-ին համաձայնագիր է կնքել և սահմանել է 30 օրացուցային օր ողջամիտ ժամկետ խախտումները,

թերությունները վերացնելու և աշխատանքները ավարտին հասցնելու նպատակով: Տեխնիկական հսկողություն իրականացնող «ԼԵՌՄԱՆ» ՍՊԸ-ն 2021 թվականի օգոստոսի 27-ին համայնքի ղեկավարին ուղղված նոր գրությունով տեղեկացրել է, որ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի կողմից թույլտրված կոպիտ խախտումները և թերությունները չեն վերացվել, առկա են նոր թերություններ և խախտումներ:
Պայմանագրի ավարտի հաջորդ օրվա՝ օգոստոսի 31-ի դրությամբ շինարարական աշխատանքները մնացել են անավարտ և չեն շտկվել տեխնիկական հսկողություն իրականացնող «ԼԵՌՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից թվարկված թերություններն ու խախտումները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կոտայք Շին» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրի 1.1 , 1.2, 1.3 կետերով ստանձնած պարտավորությունները, Աբովյանի համայնքապետարանը ղեկավարվելով «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/20» պայմանագրի 3.1.4 կետով միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքած «Աբովյան համայնքի կարիքների համար գերեզմանատան տարածքում Արցախյան պատերազմի զոհերի հիշատակի պանթեոնի կառուցման աշխատանքների կատարման» գնման պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ղեկավարվելով «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/20» ծածկագրով պայմանագրի 6.3 կետով. «Կոտայք Շին» ՍՊԸ-ից կգանձվի տուգանք պայմանագրի չընդունված ծավալի 0.5%-ի չափով՝ 49 598 /քառասունինը հազար հինգ հարյուր իննսունութ/ ՀՀ դրամ: Պայմանգրի միակողմանի լուծումը կպարտավորեցնի «Կոտայք Շին» ՍՊԸ-ին վճարելու պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հայտնում ենք, Ձեզ այն մասին, որ «Կոտայք Շին» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 45 կետի պահանջները:

Կից՝ 03.09.2021թ. N 1 արձանագրության պատճենը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Կապ. Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Ա. Հոբանյան
060-53-64-29